ՀԱՍՏԱՏՎԱԾ Է

«ՖԻԴՈ ԻՆՎԵՍԹ» փակ բաժնետիրական
ընկերության Ընդհանուր ժողովի
10/02/2023թ. որոշմամբ

ՓՈՓՈԽՎԱԾ Է

«ՖԻԴՈ ԻՆՎԵՍԹ» փակ բաժնետիրական
ընկերության Ընդհանուր ժողովի
09/07/2026թ. թիվ 26/07-005 որոշմամբ

ԳՐԱՆՑՎԱԾ Է

ՀՀ կենտրոնական բանկում

Ժողովի նախագահ

Ահարոն Լևոնյան

Aharon Levonyan

Digitally signed by Aharon Levonyan
Date: 2026.08.28 15:11:30 +04'00'

(ստորագրություն)

ՀՀ կենտրոնական բանկի նախագահ

Մարտին Գալստյան

(ստորագրություն)

Digitally signed by Martin Galstyan
Date: 2026.09.01 11:47:59 AMT
Reason: Գրանցված է 12.08.2026թ.

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

«ՖԻԴՈ ԻՆՎԵՍԹ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ

(նոր խմբագրություն)

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1.1. «ՖԻԴՈ ԻՆՎԵՍԹ» փակ բաժնետիրական ընկերությունը (այսուհետև՝ Ընկերություն) հանդիսանում է իրավաբանական անձի կարգավիճակ ունեցող առևտրային կազմակերպություն, որի կանոնադրական կապիտալը բաժանված է ընկերության նկատմամբ բաժնետերերի պարտավորական իրավունքը հավաստիացնող որոշակի թվով բաժնետոմսերի:

1.2. Ընկերության հիմնադրման մասին որոշումը հաստատված է հիմնադիրների միջև կնքված պայմանագրով (10.02.2023թ.) և Ընկերության հիմնադիր ժողովի որոշմամբ (10.02.2023թ.):

1.3. Ընկերությունն իր գործունեության ընթացքում ղեկավարվում է «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքով (այսուհետև՝ Օրենք), «Արժեթղթերի շուկայի մասին» ՀՀ օրենքով, ՀՀ այլ օրենքներով ու իրավական ակտերով և սույն կանոնադրությամբ:

1.4. Բաժնետերերի և Ընկերության միջև հարաբերությունները կարգավորվում են ՀՀ իրավական ակտերով և սույն կանոնադրությամբ:

1.5. Ընկերության ֆիրմային անվանումն է՝

հայերեն լրիվ՝	«ՖԻԴՈ ԻՆՎԵՍԹ» փակ բաժնետիրական ընկերություն
	կրճատ՝ «ՖԻԴՈ ԻՆՎԵՍԹ» ՓԲԸ
ռուսերեն լրիվ՝	Закрытое акционерное общество «ФИДО ИНВЕСТ»
	կրճատ՝ ЗАО «ФИДО ИНВЕСТ»
անգլերեն լրիվ՝	“FIDO INVEST” closed joint-stock company
	կրճատ՝ “FIDO INVEST” CJSC:

1.6. Ընկերության գտնվելու վայրը և իրավաբանական (փոստային) հասցեն է ՀՀ, ք. Երևան, Հանրապետության փող, թիվ 22 հասցեում գտնվող 15-րդ տարածքը:

1.7. Ընկերությունն իրավունք չունի անցկացնել իր թողարկած բաժնետոմսերի բաց բաժանորդագրություն կամ անսահմանափակ թվով անձանց այլ կերպ առաջարկել ձեռք բերել դրանք:

1.8. Ընկերության կողմից գործառնությունները իրականացվում են բացառապես անկանխիկ ձևով:

2. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՆԵՐՆ ՈՒ ՆՊԱՏԱԿԸ

2.1. Ընկերության ստեղծման նպատակն արժեթղթերի ոլորտում տնտեսական գործունեություն իրականացնելու ճանապարհով շահույթի ստացումն է:

2.2. Իր առջև դրված նպատակներն իրագործելու համար Ընկերությունը զբաղվում է «Արժեթղթերի շուկայի մասին» ՀՀ օրենքի 25-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ կետերով սահմանված ներդրումային ծառայությունների մատուցմամբ:

2.3. «Արժեթղթերի շուկայի մասին» ՀՀ օրենքով սահմանված այլ ներդրումային ծառայությունների մատուցմամբ Ընկերությունը կարող է զբաղվել միայն ՀՀ կենտրոնական բանկի կողմից տրված լիցենզիայի առկայության դեպքում:

3. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

3.1. Ընկերությունը համարվում է ստեղծված և կարող է գործել ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով պետական գրանցման պահից:

3.2. Ընկերությունն իրավունք ունի օրենքով սահմանված կարգով բանկային հաշիվներ բացել ՀՀ և օտարերկրյա պետությունների բանկերում ինչպես ՀՀ արժույթով, այնպես էլ արտարժույթով:

3.3. Ընկերությունն ունի իր ֆիրմային անվանմամբ հայերեն, ռուսերեն և անգլերեն գրառումներով կլոր կնիք, բլանկներ, ինչպես նաև օրենքով սահմանված կարգով գրանցված այլ նշաններ:

3.4. Ընկերությունն իր պարտավորություններով պատասխանատու է իրեն պատկանող ամբողջ գույքով:

3.5. Ընկերությունը պատասխանատու չէ բաժնետերերի պարտավորությունների համար:

3.6. Բաժնետերերը պատասխանատու չեն Ընկերության պարտավորությունների համար:

3.7. Պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինները պատասխանատվություն չեն կրում Ընկերության պարտավորությունների համար:

3.8. Ընկերությունը պատասխանատվություն չի կրում պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների պարտավորությունների համար:

3.9. Ընկերությունն իրավունք ունի.

- ՀՀ օրենսդրությամբ չարգելված բոլոր ձևերով ձեռք բերել գույք, այդ թվում արժեթղթեր, տիրապետել, օգտագործել ու տնօրինել դրանք և դրանցից ստացված եկամուտը.
- ինքնուրույն կազմավորել իր ֆինանսական ռեսուրսները, այդ թվում փոխառու միջոցների ներգրավմամբ, Հայաստանի Հանրապետությունում և այլ պետություններում ստանալ բանկային և առևտրային վարկեր, այդ թվում՝ արտարժույթով.
- օրենսդրությամբ սահմանված կարգով իր անունից թողարկել և տեղաբաշխել արժեթղթեր.
- ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով կնքել պայմանագրեր և կրել պարտավորություններ.
- ինքնուրույն ընտրել իր արտաքին տնտեսական գործունեության վարման կարգը, այն իրականացնել անմիջականորեն, առանց միջնորդի կամ այլ կազմակերպության միջոցով.
- ունենալ միջոցներ արտարժույթով, դրանք ստանալ որպես արտաքին տնտեսական գործունեության արդյունք և ՀՀ օրենսդրությամբ չարգելված բոլոր միջոցներով ձեռք բերել և ինքնուրույն տնօրինել, այդ թվում՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով վաճառել պետությանը, ձեռնարկություններին, կազմակերպություններին կամ քաղաքացիներին.
- ինքնուրույն պլանավորել իր գործունեությունը, որոշել մատուցվող ծառայությունների ծավալը, գները, իրենց մատակարարներին և արտադրանքը սպառողներին.
- ստեղծել մասնաճյուղեր և բացել ներկայացուցչություններ Օրենքի, «Արժեթղթերի շուկայի մասին» ՀՀ օրենքի և այլ իրավական ակտերի դրույթներին համապատասխան.
- հիմնադրել իրավաբանական անձի կարգավիճակ ունեցող դուստր և կախյալ ընկերություններ և մասնակցել դրանցում:

3.10. Ընկերությունը պարտավոր է.

- Օրենքով, «Արժեթղթերի շուկայի մասին» ՀՀ օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված կարգով վարել հաշվապահական հաշվառում և ՀՀ կենտրոնական բանկի նորմատիվ իրավական ակտերով սահմանված կարգով, ձևով և ժամկետներում կազմել և ՀՀ կենտրոնական բանկ ներկայացնել հաշվետվություններ, ֆինանսական տարվա ավարտից հետո՝ չորսամսյա ժամկետում, հրապարակել աուդիտորական եզրակացությունը, տարեկան ֆինանսական հաշվետվությունները, իսկ մինչև

յուրաքանչյուր եռամսյակին հաջորդող ամսվա 15-ը՝ իրենց եռամսյակային ֆինանսական հաշվետվությունները.

- ապահովել Ընկերության փաստաթղթերի (Ընկերության կանոնադրության, գույքի նկատմամբ գույքային իրավունքները հաստատող փաստաթղթերի, Ընկերության ներքին փաստաթղթերի, մասնաճյուղերի և ներկայացուցչությունների կանոնակարգերի, տարեկան հաշվետվությունների, հաշվապահական հաշվառման փաստաթղթերի, կառավարման մարմինների նիստերի արձանագրությունների, Օրենքով և այլ իրավական ակտերով նախատեսված այլ փաստաթղթերի) պահպանումը.
- ունենալ համապատասխան ներքին հսկողության համակարգ, որը կներառի Ընկերության կառավարման և գործունեության բոլոր մակարդակները:

4. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆԱԴՐԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼԸ

4.1. Ընկերության կանոնադրական կապիտալը կազմում է 82,000,000 (ութսուներկու միլիոն) ՀՀ դրամ, որը կազմում է 205 (երկու հարյուր հինգ) սովորական անվանական բաժնետոմս, մեկ բաժնետոմսի անվանական արժեքը կազմում է 400,000 (չորս հարյուր հազար) ՀՀ դրամ:

4.2. Բոլոր սովորական բաժնետոմսերը տեղաբաշխված են բաժնետերերի միջև և լրիվ վճարված են նրանց կողմից:

4.3. Ընկերության բոլոր բաժնետոմսերը սովորական են և միևնույն դասի բաժնետոմսեր են:

4.4. Ընկերությունը կարող է կանոնադրական կապիտալի չափը փոխել բաժնետերերի ընդհանուր ժողովի որոշմամբ, որը ուժի մեջ է մտնում սույն կանոնադրության մեջ համապատասխան փոփոխություններ կատարելուց և օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված կարգով գրանցելու պահից:

4.4.1. Կանոնադրական կապիտալի չափի մեծացումը:

Ընկերության կանոնադրական կապիտալի չափը կարող է մեծացվել Ընկերության բաժնետոմսերի անվանական արժեքի ավելացմամբ կամ լրացուցիչ բաժնետոմսերի տեղաբաշխմամբ, եթե նախկինում տեղաբաշխված բաժնետոմսերը լրիվ իրացված և վաճառված են:

Ընկերությունը կարող է որոշում ընդունել լրացուցիչ բաժնետոմսերի տեղաբաշխման մասին միայն Ընկերության կանոնադրության մեջ հայտարարված բաժնետոմսերի քանակի սահմաններում և միայն նախկինում տեղաբաշխված բաժնետոմսերի լրիվ վճարված լինելու դեպքում:

Ընկերությունն իր գործունեության ֆինանսական արդյունքներն ամփոփելուց հետո կարող է՝

- շահույթի մի մասը ներդնել կանոնադրական կապիտալում՝ տեղաբաշխելով նոր բաժնետոմսեր.
- իրեն պատկանող կանոնադրական կապիտալի չափից ավելի գույքը կամ դրա մասը փոխանցել կանոնադրական կապիտալ:

4.4.2. Կանոնադրական կապիտալի փոքրացումը:

Ընկերության կանոնադրական կապիտալի չափի փոքրացումը կարող է կատարվել՝

- բաժնետոմսերի անվանական արժեքի փոքրացմամբ.
- բաժնետոմսերի ընդհանուր քանակի կրճատմամբ, այդ թվում Օրենքով նախատեսված դեպքերում դրանց մի մասի ձեռքբերմամբ և մարմամբ:

Ընկերությունն իրավունք չունի փոքրացնել կանոնադրական կապիտալը, եթե դրա հետևանքով նրա չափը կդառնա ավելի փոքր Օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված Ընկերության նվազագույն կանոնադրական կապիտալից:

Կանոնադրական կապիտալի չափի փոքրացման հետևանքով մեկ տարուց ոչ պակաս ժամկետում Ընկերությանը չվերադարձված բաժնետոմսերը կարող են համարվել անվավեր: Դրանց փոխարեն Ընկերությունը կարող է թողարկել նոր բաժնետոմսեր:

Ընկերության կանոնադրական կապիտալի փոքրացման և Ընկերության կանոնադրության մեջ համապատասխան փոփոխություններ կատարելու մասին որոշումն ընդունվում է Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովի կողմից:

Ընկերության կանոնադրական կապիտալի փոքրացման պատճառով բաժնետիրոջ վճարումները կատարվում են Ընկերության կանոնադրության փոփոխությունների պետական գրանցումից հետո:

5. ԲԱԺՆԵՏՈՄՍԵՐԸ ԵՎ ԱՅԼ ԱՐԺԵԹՂԹԵՐԸ

5.1. Ընկերությունը կարող է թողարկել և տեղաբաշխել Օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված արժեթղթեր, այդ թվում՝ արտոնյալ բաժնետոմսեր, պարտատոմսեր և այլն:

5.2. Ընկերության կողմից թողարկված սովորական բաժնետոմսերի անվանական արժեքը պետք է լինի միևնույնը:

5.3. Ընկերության բաժնետոմսերը տեղաբաշխվում են Ընկերության բաժնետերերի ռեեստրում բաժնետիրոջ անձնական հաշվում գրանցման տեսքով:

5.4. Բաժնետոմսն անբաժանելի է:

5.5. Յուրաքանչյուր բաժնետոմս տալիս է ժողովներին քվեարկելու 1 (մեկ) ձայնի իրավունք:

5.6. Ընկերության լրացուցիչ տեղաբաշխված բաժնետոմսերը պետք է վճարվեն դրանց տեղաբաշխման մասին որոշմամբ սահմանված ժամկետում, բայց ոչ ուշ, քան դրանց տեղաբաշխման պահից 1 տարվա ընթացքում:

Ընկերության բաժնետոմսերի և այլ արժեթղթերի դիմաց վճարումը կարող է իրականացվել դրամով, արժեթղթերով, այլ գույքով կամ գույքային իրավունքներով, կամ այլ իրավունքներով, որոնք ունեն դրամական գնահատական:

Ընկերության բաժնետոմսերը և այլ արժեթղթերը, որոնց դիմաց վճարումը նախատեսված է ոչ դրամական միջոցներով, դրանց ձեռքբերման ժամանակ վճարվում են լրիվ արժեքով:

5.7. Ընկերությունն ունի պահուստային կապիտալ:

Ընկերության շահույթից մասհանումների հաշվին ստեղծվում է պահուստային կապիտալ՝ կանոնադրական կապիտալի 15 տոկոսի չափով:

Եթե պահուստային կապիտալը կազմում է սույն կանոնադրությամբ սահմանվածից ավելի փոքր մեծություն, հատկացումներն այդ կապիտալին կատարվում են շահույթի 5 տոկոսի չափով, ինչպես նաև Ընկերության նոր արժեթղթերի թողարկման արժեքի և դրանց անվանական արժեքի միջև եղած տարբերությունից ստացվող միջոցներից:

Պահուստային կապիտալն օգտագործվում է Ընկերության կորուստները ծածկելու, ինչպես նաև Ընկերության պարտատոմսերը մարելու և Ընկերության բաժնետոմսերը հետ գնելու համար, եթե Ընկերության շահույթն այդ նպատակին չի բավարարում:

Պահուստային կապիտալը չի կարող օգտագործվել այլ նպատակների համար (բացի օրենքով սահմանված դեպքերից):

5.8. Բաժնետերերի ընդհանուր ժողովի որոշմամբ Ընկերությունը կարող է ստեղծել նաև սպառման, կուտակման, սոցիալական զարգացման և այլ կապիտալներ:

6. ԲԱԺՆԵՏԵՐԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

6.1. Ընկերության յուրաքանչյուր սովորական բաժնետոմս տալիս է իր սեփականատեր հանդիսացող բաժնետիրոջը միևնույն իրավունքներ:

6.2. Սովորական բաժնետոմսի սեփականատեր հանդիսացող բաժնետերն իրավունք ունի՝

- մասնակցել Ընկերության ընդհանուր ժողովին՝ վերջինիս իրավասությանը պատկանող բոլոր հարցերի նկատմամբ ձայնի իրավունքով.
- իրականացնել Ընկերության կառավարումը.
- հանդես գալ առաջարկություններով ժողովներում.
- ժողովներում քվեարկել իրեն պատկանող բաժնետոմսերի ձայների չափով.
- ստանալ շահաբաժիններ Ընկերության գործունեությունից առաջացած շահույթից.
- ստանալ Ընկերության գործունեության վերաբերյալ ցանկացած տեղեկատվություն, այդ թվում՝ ծանոթանալ հաշվապահական հաշվեկշռին, հաշվետվություններին, Ընկերության գործունեությանը.
- Ընկերության ընդհանուր ժողովներում իր իրավունքները ներկայացնելու համար լիազորել երրորդ անձի (անձանց).
- Ընկերության լուծարման դեպքում ստանալ Ընկերության գույքը.
- Ընկերության միջոցների հաշվին Ընկերության կանոնադրական կապիտալի ավելացման դեպքում անվճար ստանալ համապատասխան քանակությամբ սովորական բաժնետոմսեր.
- օգտվել օրենքով և Ընկերության կանոնադրությամբ նախատեսված այլ իրավունքներից:

6.3. Բաժնետերերը պարտավոր են՝

- մասնակցել Ընկերության ընդհանուր ժողովին.
- Ընկերության կանոնադրությամբ սահմանված կարգով կատարել դրամական և գույքային ներդրումներ.
- չհրապարակել Ընկերության գործունեության վերաբերյալ գաղտնիք ներկայացնող տեղեկություններ:

7. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՇԱՀԱԲԱԺԻՆՆԵՐԻ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

7.1. Ընկերությունն իրավունք ունի հայտարարել (որոշում ընդունել) տեղաբաշխված բաժնետոմսերի դիմաց եռամսյակային, կիսամյակային և (կամ) տարեկան շահաբաժինների վճարման մասին:

Շահաբաժինները վճարվում են Ընկերության տվյալ տարվա ընթացիկ զուտ շահույթից:

Ինչպես տարեկան, այնպես էլ եռամսյակային և կիսամյակային շահաբաժինների վճարման, շահաբաժնի չափի և դրա վճարման ձևի մասին որոշումն ընդունվում է Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովի կողմից:

Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովն իրավունք ունի որոշում ընդունել շահաբաժիններ չվճարելու կամ ոչ լրիվ չափով վճարելու մասին: Այդ որոշումների գործունեության ժամկետը սահմանվում է Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովի կողմից, բայց չի կարող մեկ տարուց ավելի լինել:

Շահաբաժինների վճարման ամսաթիվը սահմանվում է Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովի շահաբաժիններ վճարելու մասին որոշմամբ:

7.2. Ընկերությունն իրավունք չունի հայտարարել (որոշում ընդունել) տեղաբաշխված բաժնետոմսերի շահաբաժինների վճարման մասին, եթե՝

- լրիվ չի վճարվել Ընկերության կանոնադրական կապիտալը.
- շահաբաժիններ վճարելու որոշումն ընդունելու պահի դրությամբ Ընկերության տնտեսական վիճակը համապատասխանում է ՀՀ օրենսդրությամբ սահմանված անվճարունակության (սնանկացման) հայտանիշներին, կամ նշված հայտանիշները ի հայտ կգան շահաբաժինների վճարման հետևանքով.
- Ընկերության զուտ ակտիվների արժեքը փոքր է Ընկերության կանոնադրական կապիտալի և պահուստային կապիտալի գումարից կամ այդ գումարից փոքր կդառնա շահաբաժինների վճարման հետևանքով:

8. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԸ (ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎ, ԳՈՐԾԱԴԻՐ ՏՆՕՐԵՆ)

8.1. Ընկերության կառավարման բարձրագույն մարմինը բաժնետերերի ընդհանուր ժողովն է, որն իրականացնում է Ընկերության գործունեության ընդհանուր ղեկավարումը:

8.1.1. Ընկերության բաժնետերերի ընդհանուր տարեկան ժողովը գումարվում է հերթական ֆինանսական տարվա ավարտից 2 ամիս հետո 3 ամսվա ընթացքում:

8.1.2. Բաժնետերերի տարեկան ժողովից բացի գումարվող Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովները համարվում են արտահերթ: Ընկերության արտահերթ ժողովներ գումարվում են անհետաձգելի հարցերի քննարկման համար:

8.1.3. Ժողովի անցկացման տարին, ամիսը, ամսաթիվը և կարգը, ինչպես նաև բաժնետերերին ժողովի անցկացման մասին ծանուցման կարգը, բաժնետերերին տրամադրվող նյութերի ցանկը սահմանում է գործադիր տնօրենն՝ Օրենքի և սույն կանոնադրության պահանջներին համապատասխան:

8.1.4. Ժողովի իրավասություններն են՝

1) կանոնադրության հաստատումը, դրանում փոփոխությունների և լրացումների կատարումը, կանոնադրության հաստատումը նոր խմբագրությամբ.
2) Ընկերության վերակազմակերպումը և լուծարումը.
3) ամփոփ, միջանկյալ և լուծարման հաշվեկշիռների հաստատումը, լուծարային հանձնաժողովի նշանակումը.
4) հայտարարված բաժնետոմսերի ծավալի առավելագույն չափի սահմանումը.
5) բաժնետոմսերի անվանական արժեքի փոքրացման, բաժնետոմսերի ընդհանուր քանակի կրճատման նպատակով Ընկերության կողմից տեղաբաշխված բաժնետոմսերի ձեռքբերման, ինչպես նաև Ընկերության կողմից ձեռք բերված կամ հետգնված բաժնետոմսերի մարման ճանապարհով կանոնադրական կապիտալի չափի նվազեցումը.
6) բաժնետոմսերի անվանական արժեքի մեծացման կամ լրացուցիչ բաժնետոմսերի տեղաբաշխման միջոցով կանոնադրական կապիտալի չափի ավելացումը.
7) Ընկերության աշխատակիցների բաժնետիրացման ծրագրի հաստատումը.
8) Ընկերության տարեկան հաշվետվությունների, հաշվապահական հաշվեկշիռների, շահույթների և վնասների հաշվի, շահույթների և վնասների բաշխման հաստատումը, տարեկան շահութաբաժինների վճարման մասին որոշման ընդունումը և տարեկան շահութաբաժինների չափի հաստատումը: Նշված հարցերը քննարկվում են բացառապես տարեկան ժողովներում: Եթե սահմանված ժամկետում տարեկան ժողովը տեղի չի ունեցել, ապա արտահերթ ժողով կարող է հրավիրվել միայն Ընկերության լուծարման կամ սույն ենթակետում նշված հարցերը քննարկելու համար: Նշված հարցերով հրավիրված արտահերթ ժողովում այլ հարցեր քննարկվել

չեն կարող, բացառությամբ սույն ենթակետում նշված հարցերով կայացված որոշումներով պայմանավորված կանոնադրական կապիտալի նվազեցման դեպքերի.

9) Օրենքի 47-րդ հոդվածի 2-րդ մասին համապատասխան՝ Ընկերության բաժնետոմսերի կամ բաժնետոմսերի փոխարկվող այլ արժեթղթերի նկատմամբ Ընկերության բաժնետերերի նախապատվության իրավունքը չկիրառելու մասին որոշման ընդունումը.
10) առանձին տեսակների կամ դասերի բաժնետոմսերի դիմաց շահութաբաժիններ չվճարելու կամ արտոնյալ բաժնետոմսերի դիմաց շահութաբաժինները ոչ լրիվ չափով վճարելու մասին որոշումների ընդունումը.
11) ժողովի վարման կարգի հաստատումը.
12) հաշվիչ հանձնաժողովի ձևավորումը.
13) բաժնետոմսերի համախմբումը (կոնսոլիդացիան), բաժանումը.
14) գործարքների կնքման մասին որոշման ընդունումը՝ Օրենքի 64-րդ հոդվածով նախատեսված դեպքերում.
15) խոշոր գործարքների կնքման մասին որոշման ընդունումը.
16) Ընկերության կողմից բաժնետերերին տեղեկությունների և նյութերի հաղորդման ձևի որոշումը, ներառյալ զանգվածային լրատվության համապատասխան միջոցի ընտրությունը, եթե հաղորդումը պետք է իրականացվի նաև հրապարակային հայտարարության ձևով.
17) Ընկերության կողմից տեղաբաշխված բաժնետոմսերի ձեռքբերումը և հետգնումը՝ սույն օրենքով նախատեսված դեպքերում.
18) դուստր կամ կախյալ ընկերությունների ստեղծումը կամ դրանց մասնակցությունը.
19) Ընկերության գործունեության հիմնական ուղղությունների որոշումը.
20) պարտատոմսերի և այլ արժեթղթերի տեղաբաշխումը.
21) գույքի շուկայական արժեքի որոշումը՝ Օրենքի 59-րդ հոդվածով սահմանված կարգով.
22) Օրենքով նախատեսված դեպքերում Ընկերության տեղաբաշխված բաժնետոմսերի, պարտատոմսերի և այլ արժեթղթերի ձեռքբերումը.
23) Ընկերության գործադիր մարմնի ձևավորումը, դրա լիազորությունների վաղաժամկետ դադարեցումը, ինչպես նաև Ընկերության գործադիր մարմնի լիազորությունները ժամանակավորապես իրականացնող պաշտոնատար անձի նշանակումը.
24) Ընկերության գլխավոր հաշվապահի և աուդիտն իրականացնող անձի հաստատումը.
25) Ընկերության ղեկավար պաշտոնատար անձանց աշխատանքի վարձատրության պայմանների որոշումը.
26) Ժողովին կից հանձնաժողովների (հանձնախմբերի) ձևավորումը, այդ թվում՝ աուդիտի.
27) Ընկերության աուդիտն իրականացնող անձի վճարման չափի սահմանումը.
28) Ընկերության պահուստային կապիտալի և այլ հիմնադրամների օգտագործումը.
29) Օրենքի IX գլխով նախատեսված գործարքների կնքումը.
30) Ընկերության գործունեությունը կարգավորող ներքին կանոնների և կանոնակարգերի հաստատումը.
31) Օրենքով, «Արժեթղթերի շուկայի մասին» ՀՀ օրենքով և կանոնադրությամբ նախատեսված այլ որոշումների ընդունումը:

8.1.5. Ժողովում ձայնի իրավունքից օգտվում են հասարակ (սովորական) բաժնետոմսերի սեփականատեր հանդիսացող բաժնետերերը:

8.1.6. Ժողովն իրավասու է (քվորում ունի), եթե ժողովի մասնակիցների գրանցման ավարտի պահին գրանցվել են Ընկերության բաժնետերերը (նրանց ներկայացուցիչները), որոնք համատեղ տիրապետում են Ընկերության տեղաբաշխված քվեարկող բաժնետոմսերով տրամադրվող ձայների 50-ից ավելի տոկոսին: Քվորումի բացակայության դեպքում հայտարարվում է նոր ժողովի գումարման տարին, ամիսը, ամսաթիվը: Նոր ժողովի գումարման դեպքում օրակարգի փոփոխություն չի թույլատրվում:

8.1.7. Ժողովի որոշումներն ընդունվում են ժողովին մասնակցող՝ քվեարկող բաժնետոմսերի սեփականատերերի ձայների պարզ մեծամասնությամբ, բացառությամբ սույն կանոնադրության 8.1.4. ենթամասի 1-3-րդ (բացառությամբ Ընկերության լուծարման մասին) և 15-րդ կետերում թվարկված հարցերով որոշումների, որոնք ընդունվում են՝ քվեարկող բաժնետոմսերի սեփականատերերի ձայների 3/4-ով:

8.1.8. Ժողովի որոշումները կարող են ընդունվել առանց օրակարգի հարցերի քննարկման և քվեարկության դրված հարցերի վերաբերյալ որոշումների ընդունման նպատակով Ընկերության մասնակիցների համատեղ ներկա լինելու՝ հեռակա կարգով քվեարկության (այդ թվում՝ առցանց քվեարկության) միջոցով: Հեռակա կարգով քվեարկություն կարող է անցկացվել փաստաթղթերը փոստային, հեռագրային, հեռատիպային, հեռախոսային, էլեկտրոնային կապի՝ փոխանցվող և ընդունվող հաղորդագրությունների իսկությունը հավաստող և հասցեատիրոջ կողմից դրանք ստանալու փաստի հաստատման հնարավորություն տվող միջոցներով փոխանակելու եղանակով: Հեռակա կարգով քվեարկությամբ ընդունված ժողովի որոշումն օրինական ուժ ունի, եթե քվեարկությանը մասնակցել են Ընկերության քվեարկող բաժնետոմսերով տրամադրվող ձայների քանակի կեսից ավելիին տիրապետող բաժնետերերը:

8.1.9. Ժողովի ընդունած որոշումների մասին տեղեկությունները, ինչպես նաև քվեարկության արդյունքները ներկայացվում են Ընկերության բաժնետերերին՝ այդ որոշումներն ընդունելու պահից՝ 45 օրվա ընթացքում:

8.1.10. Բաժնետերն իրավունք ունի դատական կարգով բողոքարկել Օրենքի, այլ իրավական ակտերի և կանոնադրության պահանջների խախտմամբ ժողովի ընդունած որոշումը:

8.1.11. Բաժնետերերը ծանուցվում են ժողովի գումարման մասին՝ նրանց համապատասխան գրավոր կամ էլեկտրոնային փոստով ծանուցում ուղարկելու միջոցով: Ծանուցումը ներառում է առնվազն Ընկերության ֆիրմային անվանումը և գտնվելու վայրը, ժողովի գումարման տարին, ամիսը, ամսաթիվը, ժամը և վայրը, ժողովին մասնակցելու իրավունք ունեցող բաժնետերերի ցուցակը կազմելու տարին, ամիսը, ամսաթիվը, ժողովի օրակարգում ընդգրկված հարցերը, բաժնետերերի ծանոթանալու կարգը ժողովում քննարկվող հարցերին վերաբերող տեղեկություններին և նյութերին, որոնք պետք է ներկայացվեն բաժնետերերին ժողովը նախապատրաստելու ընթացքում:

8.2. Ընկերության ընթացիկ գործունեության ղեկավարումն իրականացնում է Ընկերության գործադիր տնօրենը:

8.2.1. Ընկերության գործադիր տնօրենը՝

1) տնօրինում է Ընկերության գույքը, այդ թվում՝ ֆինանսական միջոցները, գործարքներ է կատարում Ընկերության անունից.
2) ներկայացնում է Ընկերությունը ՀՀ-ում և արտասահմանում,
3) գործում է առանց լիազորագրի.
4) տալիս է լիազորագրեր.
5) սահմանված կարգով կնքում է պայմանագրեր, այդ թվում՝ աշխատանքային.

6) բանկերում բացում է Ընկերության հաշվարկային (այդ թվում՝ տարադրամային) և այլ հաշիվներ.
7) սահմանում է Ընկերության կողմից մատուցվող ծառայությունների սակագները.
8) ընկերության Ընդհանուր ժողովի հաստատմանն է ներկայացնում Ընկերության աշխատանքային կանոնակարգը, առանձնացված ստորաբաժանումների կանոնակարգերը.
9) իր իրավասության սահմաններում արձակում է հրամաններ, հրահանգներ, տալիս է կատարման համար պարտադիր ցուցումներ և վերահսկում դրանց կատարումը.
10) սահմանված կարգով աշխատանքի է ընդունում և աշխատանքից ազատում Ընկերության աշխատակիցներին.
11) աշխատակցի նկատմամբ կիրառում է խրախուսման և կարգապահական պաշտպանվածության միջոցներ:

8.2.2. Ընկերության գործադիր տնօրենի լրացուցիչ իրավասություններն են.

1) Ընկերության գույքի ձեռքբերման կամ օտարման հետ կապված այլ գործարքների կնքումը՝ Օրենքի VIII.1-ին գլխով նախատեսված դեպքերում.
2) Ընկերության վարչակազմակերպական կառուցվածքի հաստատումը.
3) ամենամյա ծախսերի նախահաշվի և դրա կատարողականի հաստատումը.
4) Ընկերության հաստիքացուցակի հաստատումը.
5) տարեկան և արտահերթ ժողովների գումարումը, բացառությամբ Օրենքի 74-րդ հոդվածի 6-րդ կետով նախատեսված դեպքերի.
6) ժողովների օրակարգի հաստատումը.
7) ժողովներին մասնակցելու իրավունք ունեցող բաժնետերերի ցուցակը կազմելու տարվա, ամսվա, ամսաթվի հաստատումը, ինչպես նաև բոլոր այն հարցերի լուծումը, որոնք կապված են ժողովների նախապատրաստման ու գումարման հետ և վերապահված են ժողովի իրավասությանը՝ Օրենքի X գլխի դրույթներին համապատասխան.
8) Օրենքի 67-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ, 14-րդ, 18-20-րդ, 22-րդ և 23-րդ կետերով նախատեսված հարցերը ժողովների քննարկմանը ներկայացնելը.
9) Ընկերության բաժնետոմսերի դիմաց վճարվող տարեկան շահութաբաժինների չափի և վճարման կարգի վերաբերյալ ժողովին առաջարկությունների նախապատրաստումը.
10) Ընկերության բաժնետոմսերով միջանկյալ (եռամսյակային կամ կիսամյակային) շահութաբաժինների չափի և վճարման կարգի սահմանումը.
11) Ընկերության կառավարման մարմինների գործունեությունը կանոնակարգող ներքին փաստաթղթերի հաստատումը.
12) Ընկերության մասնաճյուղերի և ներկայացուցչությունների, հիմնարկների ստեղծումը.
13) այլ կազմակերպություններին մասնակցելը, եթե այդ մասնակցությունը խոշոր գործարք չէ:

8.3. Ընկերության տնօրենը, տնօրինության անդամներն իրենց պարտականությունների կատարման ընթացքում պետք է գործեն՝ ելնելով Ընկերության շահերից, իրականացնեն իրենց իրավունքները և Ընկերության նկատմամբ իրենց պարտականությունները կատարեն բարեխիղճ ու ողջամիտ կերպով, խուսափեն անձնական և Ընկերության շահերի միջև իրական և հնարավոր բախումներից (ֆիդուցիար պարտականություն):

9. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՆԵՐՔԻՆ ԱՈՒԴԻՏԸ

9.1. Ընկերության գործունեության վերահսկումն իրականացնելու համար ժողովն ընտրում է ներքին աուդիտ:

9.2. Ընկերության ներքին աուդիտն անկախ է իր իրավասություններն իրականացնելիս և հաշվետու է Ընկերության իրավասու կառավարման մարմնին (ժողովին):

9.3. Ներքին աուդիտորն Ընկերության կողմից հաստատված կանոնակարգի համաձայն՝

1) հսկողություն է իրականացնում Ընկերության ընթացիկ գործունեության և ռիսկերի նկատմամբ.
2) ստուգում է Ընկերության գործունեության համապատասխանությունն օրենքով, դրա հիման վրա ընդունված նորմատիվ իրավական ակտերով, կարգավորվող շուկայի կանոններով, ընկերության գործունեության կանոններով և այլ իրավական ակտերով սահմանված պահանջներին.
3) տալիս է եզրակացություններ և ներկայացնում առաջարկություններ իրավասու կառավարման մարմնի (ժողովի) ներկայացրած և այլ հարցերի վերաբերյալ:

9.4. Ընկերության գործադիր տնօրենը պարտավոր է ապահովել բավարար պայմաններ ներքին աուդիտորի իրավասությունների արդյունավետ իրականացման համար:

9.5.Ներքին աուդիտորը պարտավոր է հայտնել Ընկերության գործադիր տնօրենին, ժողովին, ՀՀ կենտրոնական բանկին Ընկերության կողմից «Արժեթղթերի շուկայի մասին» ՀՀ օրենքով, այլ իրավական ակտերով սահմանված պահանջների ցանկացած խախտման, ինչպես նաև հաճախորդների շահերին հասցված ցանկացած էական վնասի մասին՝ դրանց հայտնաբերման պահից՝ 5 աշխատանքային օրվա ընթացքում:

10. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԵՐ ԵՎ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՉՈՒԹՅՈՒՆՆԵՐ

10.1. ՀՀ տարածքում և նրանից դուրս Ընկերությունը չունի մասնաճյուղեր և ներկայացուցչություններ:

11. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼԸ

11.1. Ընկերության կանոնադրության մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելը, ինչպես նաև Ընկերության նոր խմբագրությամբ կանոնադրության հաստատելը տեղի է ունենում բաժնետերերի ընդհանուր ժողովի որոշմամբ, որն ընդունվում է ժողովին մասնակցած քվեարկող բաժնետերերի ձայների 3/4-ով, իսկ կանոնադրական կապիտալի չափի մեծացման հետ կապված դեպքերում՝ ձայների մեծամասնությամբ:

11.2.Եթե կանոնադրության մեջ լրացումներ և փոփոխություններ կատարելը, ինչպես նաև կանոնադրությունը նոր խմբագրությամբ հաստատելը սահմանափակում են բաժնետերերի իրավունքները, ապա այն բաժնետերերը, որոնք դեմ են քվեարկել այդ որոշմանը կամ չեն մասնակցել քվեարկությանը, իրավունք ունեն պահանջել Ընկերությունից հետ գնել իրենց բաժնետոմսերը՝ Օրենքի 58-րդ հոդվածով սահմանված կարգով:

12. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԿԱԶՄԱՎՈՐՈՒՄԸ ԵՎ ԼՈՒԾԱՐՈՒՄԸ

12.1. Ընկերությունը կարող է վերակազմավորվել Օրենքով սահմանված կարգով միաձուլման, միացման, բաժանման, առանձնացման և վերափոխման միջոցով:

12.2. Ընկերությունը վերակազմավորված է համարվում, բացառությամբ միացման միջոցով վերակազմավորման դեպքերի, վերակազմավորման արդյունքում ստեղծված իրավաբանական անձանց պետական գրանցման պահից: Ընկերությունն այլ ընկերության միացման միջոցով վերակազմավորման դեպքում առաջինը համարվում է վերակազմավորված ձեռնարկությունների պետական գրանցումն իրականացնող մարմնի կողմից այդ ընկերության գործունեության դադարեցման մասին գրառումը կատարելու պահից:

12.3. Վերակազմավորման արդյունքում ստեղծված ընկերությունների պետական գրանցումը և վերակազմավորման արդյունքում իրենց գործունեությունը դադարեցրած ընկերությունների գործունեության դադարման մասին գրառումը կատարվում է օրենքով սահմանված կարգով:

12.4. Ընկերության լուծարումը հանգեցնում է Ընկերության դադարմանը առանց Ընկերության իրավունքների և պարտականությունների իրավահաջորդության կարգով այլ անձանց փոխանցման:

12.5. Ընկերության լուծարման հիմքերն են՝

1) դատարանի կողմից Ընկերության պետական գրանցումն անվավեր ճանաչելը.
2) ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովում Ընկերության առանց իրավահաջորդի լուծարման մասին որոշում ընդունելը.
3) ընկերությունը սնանկ հայտարարելու մասին դատարանի օրինական ուժի մեջ մտած որոշումը.
4) ընկերությունը լուծարելու մասին դատարանի օրինական ուժի մեջ մտած որոշումը,
5) Օրենքով և այլ իրավական ակտերով նախատեսված այլ հիմքերով:

12.6. Նախքան լուծարման մասին որոշում ընդունելը Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովը պետք է հաստատի գործադիր տնօրենի կողմից ներկայացված ամփոփիչ հաշվեկշիռը ու Ընկերության լուծարման նախագիծը:

12.7. Ընկերության լուծարումը համարվում է ավարտված, իսկ նրա գոյությունը՝ դադարած ձեռնարկությունների պետական ռեգիստրում համապատասխան գրառում կատարելու պահից: